5018

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Համբարձում Մաթևոսյան

«08» 06 2026թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 073 - 26

Նախաձեռնող՝ ***« Դոմեն Գրուպ » ՍՊԸ***
Սյունիքի մարզ, Կապան համայնք, Գործարանային փողոց 1/7

Գործունեությունը՝ ***Պահեստի կառուցում, անավարտ շինության վերակառուցում,ավարտում***
Սյունիքի մարզ, Կապան համայնք, Գործարանային փողոց 1/7

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 073 - 26

«08» հունիսի **2026թ.**

Կապան համայնքի Գործարանային փողոց 1/7 հասցեում նախատեսվող պահեստի կառուցման, անավարտ շինության վերակառուցման, ավարտման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Դոմեն Գրուպ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն նախագծային փաստաթուղթ
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Սյունիքի մարզ, Կապան համայնք

Ներածական մաս. «Դոմեն Գրուպ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է իրականացնել Կապան համայնքի Գործարանային փողոց 1/7 հասցեում պահեստի կառուցման, անավարտ շինության վերակառուցման, ավարտման աշխատանքներ:

Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն: Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 0.605 հա:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի, 8) կետի «ա» ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության (այսուհետ՝ Շինություն) հողամասը կառուցապատված, գրեթե հարթ ռելիեֆով տարածք է: Ռելիեֆի նիշերը տատանվում են ծովի մակարդակից մոտ 765 մետրի վրա: Նախատեսվող գործունեության տարածքից ամենամոտ շինությունը՝ կիսակառույց, գտնվում է 8.5 մ հեռավորության վրա, Մ 2 միջպետական ճանապարհը՝ 9.6 մ և գործող օդանավակայանը՝ 205.17 մ հեռավորության վրա: Տարածքը ծառազուրկ է, բացակայում են բնության և պատմամշակութային հուշարձանները, ջրային ռեսուրսները, Կարմիր գրքերում գրանցված բույսերը և կենդանիները: Հողի բերրի շերտը բացակայում է:

Գեոմորֆոլոգիական տեսակետից նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Ողջի գետի հունի բարձր մակարդակի հարթակում: Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքի մոտ նախկինում իրականացված հորատման արդյունքներով ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել: Դրանք գտնվում են գետին ավելի մոտ ափամերձ շրջանում գրունտային ջրերը գտնվում են խորը հորիզոններում: Ֆիզիկաերկրաբանական

վտանգավոր երևույթները՝ կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, բացակայում են:

Շինության կառուցման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

- հողի ընդհանուր մակերես՝ 0.605 հա,
- կառուցապատման մակերեսը ՝ 2614.85 մ^2,
- բարեկարգման մակերես՝ 1534.15 մ^2,
- բարձրությունը՝ 7.80 մ:

Նախատեսվող գործունեության շրջանակներում նախատեսվում է«Դոմեն Գրուպ» ՍՊԸ-ին պատկանող գործող՝ 1901 մ^2 մակերեսով խանութի հարևանությամբ կառուցել մեկհարկանի, մեկ մասնաշենքից բաղկացած պահեստային և առևտրային սրահով շինություն, որը կներառի նաև հանդերձարան, սանհանգույց և բացօթյա ծածկ:

Նախատեսվող շինության կառուցման նպատակով իրականացվելու են կիսակառույց շինության առկա կրող կոնստրուկցիաների վերակազմավորման աշխատանքներ: Մասնավորապես, նախատեսվում է ապամոնտաժել 400×300 մմ հատույթով 10 և 300×300 մմ հատույթով 5 երկաթբետոնե սյուներ, որոնց փոխարեն մոնտաժվելու են 400×300 մմ հատույթով 13 նոր երկաթբետոնե սյուներ՝ համաձայն նախագծային լուծումների: Նախատեսվում է նաև ապամոնտաժել առկա՝ 250 մմ հաստությամբ արտաքին պատերը և դրանց փոխարեն կառուցել 100 մմ հաստությամբ սենդվիչ-պանելային արտաքին պատեր:Քանի որ շինության ±0.00 նիշը միջին հաշվով 1.6 մ-ով բարձր է հարակից փողոցի նիշից, մուտքի հատվածում կկառուցվեն արտաքին աստիճաններ և թեքահարթակ: Շինության արտաքին պատերը և ինժեներական ցանցերի խողովակաշարերը կջերմամեկուսացվեն համապատասխան ջերմամեկուսիչ նյութերով՝ էներգաարդյունավետության և շահագործման հուսալիության ապահովման նպատակով: Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կազմակերպման համար կիրականացվի սառը ջրամատակարարման ներքին ցանցի մոնտաժ՝ այն միացնելով շենքի գործող ներքին ջրամատակարարման համակարգին: Միաժամանակ կկառուցվի կենցաղային կոյուղու ներքին համակարգ, որի կոյուղատարերը կմիանան նոր կառուցվող կոյուղու դիտահորերին՝ ապահովելով խողովակաշարերի առնվազն i = 0.02 թեքություն: Սանհանգույցներում կտեղադրվեն հախճապակե զուգարանակոնքեր և լվացարաններ, իսկ լոգասենյակներում՝ ջրախառնիչներ և ցնցուղային սարքավորումներ՝ գործող շինարարական և սանիտարահիգիենիկ նորմերի պահանջներին համապատասխան:

Շինությունների տանիքը նախագծված է թեք՝ արտաքին ջրահեռացման համակարգով կազմակերպված:

Նախագծային լուծումների համաձայն՝ շինության ֆունկցիոնալ նշանակությունը վերաբերում է բացառապես ոչ պարենային ապրանքների առևտրին, մասնավորապես՝ մանրահատակի, լամինատի, հատակածածկերի այլ տեսակների և սանհանգույցային սարքավորումների վաճառքին:

Շինարարական աշխատանքների տևողությունը կկազմի 24 ամիս, որի ընթացքում կշահագործվեն համապատասխան շինարարական մեքենաներ և մեխանիզմներ: Փոխադրամիջոցների և շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկումն ու վառելիքալիցքավորումը կիրականացվեն շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված սպասարկման կետերում: Շինարարական տեխնիկայի կայանման համար առանձնացված տարածքը կծածկվի ավազի կամ մանրախճի շերտով, իսկ շինհրապարակի ելքի հատվածում կկազմակերպվի ավտոմեքենաների անիվների լվացման մեկ հարթակ:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Շինհրապարակում սանիտարահիգիենիկ պայմանների ապահովումը կիրականացվի ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներին համապատասխան: Աշխատողների կենցաղային կարիքների սպասարկման համար տարածքում կտեղադրվի բիոզուգարան: Դրա մաքրումն ու սպասարկումը կիրականացվեն ըստ լցվածության աստիճանի՝ մասնագիտացված կազմակերպության կողմից, պայմանագրային հիմունքներով:

Շինարարության ընթացքում օգտագործվելու են տարբեր տեսակի շինարարական նյութեր: Շինարարական բետոնը մատակարարվելու է պատրաստի վիճակում, մասնագիտացված ընկերության կողմից՝ համապատասխան բետոնախառնիչ մեքենաներով:

Շինարարության ընթացքում ջրային ռեսուրսները կօգտագործվեն աշխատողների խմելու և կոմունալ-կենցաղային կարիքների ապահովման, աշխատանքային հարթակի ջրցանման, ինչպես նաև ավտոմեքենաների անիվների լվացման նպատակով: Խմելու որակի և կենցաղային կարիքների համար անհրաժեշտ ջրամատակարարումը կիրականացվի գոյություն ունեցող ջրագծից՝ Վեոլիա Ջուր ՓԲԸ-ի հետ կնքված գործող պայմանագրի շրջանակներում: Աշխատանքային հարթակի ջրցանման և անիվների լվացման համար անհրաժեշտ տեխնիկական ջուրը կմատակարարվի ավտոցիստեռններով՝ պայմանագրային հիմունքներով:

Անիվների լվացման, բետոնախառնիչ և բետոնամղիչ մեքենաների լվացման արդյունքում առաջացող բետոնաջրերի և անձրևաջրերից առաջացող հոսքաջրերը կուղորդվեն դեպի տարածքում տեղադրվող համապատասխան տարողությամբ պարզարան: Պարզարանների պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման և անիվների լվացման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Շինհրապարակը ցանկապատվելու է ժամանակավոր ցանկապատով, կնախատեսվեն նյութերի և բետոնի ընդունման հարթակներ: Շինարարության և շահագործման փուլերում տարածքն կապահովվի գիշերային լուսավորությամբ, ապահովված են լինելու հակահրդեհային ինվենտարով:

Քանի որ տարածքում առկա են անհրաժեշտ ենթակառուցվածքները, ինչպես նաև դրանց շահագործող կազմակերպությունների հետ կնքված գործող պայմանագրերը, շահագործման ընթացքում ջրամատակարարումն ու ջրահեռացումը, էլեկտրամատակարարումը կիրականացվեն գոյություն ունեցող համակարգերին միանալու միջոցով: Անհրաժեշտության դեպքում, լրացուցիչ հզորությունների պահանջ առաջանալու պարագայում, կդիմվի «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի՝ նոր տեխնիկական պայմանների ստացման համար:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել հողային աշխատանքներ, որոնց արդյունքում առաջացած հողային զանգվածի մի մասը կօգտագործվի հետլիցքի նպատակով, իսկ ավելցուկային զանգվածը՝ տարածքի բարեկարգման աշխատանքների նպատակով:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնատեսակներից սև և գունավոր մետաղները կհավաքվեն և կհանձնվեն մասնագիտացված կազմակերպությունների՝ պայմանագրային հիմունքներով, իսկ շինաղբը, բետոնի մնացորդները, պարկերը և այլն, կհավաքվեն աղբամաններում և կտեղափոխվեն Կապանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր: Կենցաղային աղբի կուտակման համար տեղադրվելու են աղբամաններ, աղբահեռացումը կատարվելու է ըստ անհրաժեշտության՝ պայմանագրային հիմունքներով:

Շահագործման փուլում կենցաղային աղբի կուտակման համար նախատեսվում է տեղադրել աղբի տեսակավորման աղբամաններ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը բարեկարգել, որը կներառի բետոնե սալիկապատ և ասֆալտապատ հարթակների կառուցում: Կանաչապատման աշխատանքներ չեն նախատեսվում՝ հողատարածքի սահմանափակ չափերի և ազատ տարածքների բացակայության պատճառով:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմացմանն ուղղված մոնիթորինգ.

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում՝ օրական 2 անգամ հաճախականությամբ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- աղմուկի և թրթռումների թույլատրելի մակարդակների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- տրանսպորտային միջոցների սպասարկում շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Պատճառաբանական մաս. Կապանի Գործարանային փողոց 1/7 հասցեում նախատեսվող պահեստի կառուցման, անավարտ շինության վերակառուցման, շինության կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննական գործընթացն իրականացվել է բնապահպանական ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, ինչպես նաև առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության և կադաստրի կոմիտեները, Սյունիքի մարզպետարանը, Կապան համայնքը:

Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել Հաշվետվության լրամշակման ընթացքում:

Հանրային երկրորդ լսման ընթացքում Ընկերության տնօրենը նշեց, որ չնայած նախատեսվող գործունեության ցածր հարկայնությանը, մինչև շինարարական աշխատանքների մեկնարկը նախագիծը կներկայացվի Քաղաքացիական ավիացիայի կոմիտե՝ սահմանված կարգով համաձայնեցում ստանալու նպատակով: Բեռնատար մեքենաները Մ 2 միջպետական ճանապարհից անմիջապես մուտք են գործելու շինության ետնամասում նախատեսված պահեստային տարածք, իսկ մարդատար մեքենաների համար արդեն իսկ առկա է ավտոկայանատեղի՝ «Դոմեն Գրուպ » ՍՊԸ-ին պատկանող հարևանությամբ գործող խանութի մուտքի մոտ, ինչը կնվազեցնի ճանապարհի վրա դրանց կանգառների և մանևրումների անհրաժեշտությունը և կկանխի լրացուցիչ ծանրաբեռնվածության առաջացումը:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու է ժամանակավոր բնույթ:

Ամփոփելով նախատեսվող գործունեության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող

գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կկրեն տեղայնացված և ժամանակավոր բնույթ, կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման և շահագործման ընթացքում անհրաժեշտ է հետևել գնահատման հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ բնապահպանական նորմերի ապահովման նպատակով:
- Շինարարական հրապարակի կազմակերպման, շինարարական հրապարակներում փոշու արտանետումները վերահսկելու նպատակով օդի որակի մոնիթորինգի սարքավորումների տեղադրման և փոշենստեցման միջոցառումներն իրականացնել քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2026 թվականի հունվարի 15-ի N 02-Ն հրամանի պահանջներին համապատասխան, ինչպես նաև պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
- Շինարարական աշխատանքների մեկնարկը սկսել Քաղաքացիական ավիացիայի կոմիտե կողմից նախագիծի համաձայնեցումը ստանալուց հետո:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական աղբի և թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Կապանի համայնքապետարանի հետ համաձայնեցված:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Դոմեն Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կապան համայնքի Գործարանային փողոց 1/7 հասցեում պահեստի կառուցման, անավարտ շինության վերակառուցման, ավարտման աշխատանքներ: շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Ռուզան Մակինյան